ՈՐՈՇՈՒՄ
«03» ապրիլի 2024թվականի N 1-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի կողմից 16.02.2024 թվականին հայտարարված ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-24/18 ծածկագրով «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ի կարիքների համար էլեկտրական լամպերի ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «ԼԱ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ. հայտում բացակայել է դիմում հայտարարությունը (Հավելված 1), առաջարկվող ապրանքի տեխնիկական նկարագիրը (Հավելված 1.1), ինչպես նաև գնային առաջարկը (Հավելված 2) էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված է եղել Արտաշես Մկրտչյանի կողմից, սակայն հայտում բացակայել է տնօրենի կողմից վերջինիս վերապահված լիազորությունները հավաստող փաստաթուղթը (լիազորագիրը):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 26.02.2024 թվականին Մասնակցին ծանուցվել է հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, Մասնակցի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ կետով՝ Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Կնքված պայմանագրի մասին հատարարությունը 19.03.2024թ. հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «ԼԱ ԻՄՊՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ

GHAZARYAN KAREN 3504700068

Digitally signed by GHAZARYAN KAREN 3504700068
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••, serialNumber=64f48214d0c9, cn=GHAZARYAN KAREN 3504700068
Date: 2024.04.03 11:29:43 +04'00'

Կ.Ղազարյան